ԵՐՋԱՆԻԿ ԳԵՈՐԳԵԱՆ
ՍՈՒՍԱՆՆԱ ԳԵՈՐԳԵԱՆ

ՄԱԿԴԻՐՆԵՐԸ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

Գարեգին Նժդեհի պատկերաւոր մտածողութեան դրսեւորումներից մէկը գեղարուեստական մակդիրներն են, որոնցով նա բնութագրում է մարդուն, կեանքի այս կամ այն երեւոյթը, բնութիւնը: Հեղինակն, անշուշտ, օգտագործել է ժողովրդական մտածողութեան, այսպէս կոչուած, կայուն մակդիրները՝ իրենց մակդիրակիրների հետ, ինչպիսիք են՝ *սար դարդ, ծով ցաւ,* ապա նաեւ՝ համընդհանուր ճանաչում ստացած, այլեւայլ հեղինակների կողմից մշտապէս գործածուող մակդիրներ՝ մակդիրակիրների հետ՝ *խենթ քամի, բոցավառ շրթունքներ, առիւծածին մայրեր* եւ ուրիշներ: Սակայն մեր բառաքաղած մակդիրների մեծագոյն մասը Նժդեհի ներշնչանքի, մտքի արգասիքներն են, որոնց վրայ հիմնականում կծանրանանք:

Լեզուական առումով քննուող մակդիրներն արտայայտւում են մէկական բառով եւ անհամեմատ սակաւ՝ բառակապակցութիւններով: Վերջիններից կարելի է յիշատակել (մակդիրները մշտապէս ներկայացւում են մակդիրակիրների հետ). *Արարատեան արեւով օծուն ճակատ, հոգեպէս քանդուած էակ, հոգով արծիւ հայ, ճշմարտութեամբ օծուն գրիչ* եւ այլն. «... ջերմ համբոյր ... մեծ վշտակրին (Աւ. Ահարոնեանին), որի **Արարատեան արեւով օծուն ճակատը** այնքան սիրով հանճարի ձեռքը շօշափեց»[1] , «Նա, իբր **հոգեպէս քանդուած էակ**՝ նաեւ պատրապաշտ է» (Հ. էջ 197), «Ցեղակրօնը ... **հոգով արծիւ հայն** է, որ թեւահարում է վերստին ... դէպի հայոց պատմութեան կատարները» (Հ. էջ 243-244), «Տեսնել ու հասկանալ կ՚սկսին ... շարժուիլ կ՚սկսին **ճշմարտութեամբ օծուն գրիչներ**» (Հ. էջ 88):

Հանդիպում են համեմատութիւններ, որոնք ծառայում են իբրեւ մակդիրներ. *ծովի պէս յուզուած ջահել, արեւի պէս տաք գիւղել.* «Գուցէեւ իմ ստուերն է յուզել ծովի կապուտաչեայ աղջիկներին ... - մտածեց **ծովի պէս յուզուած ջահելը**»[2] , «... կռուով փախցրեց երազին տեսած **արեւի պէս տաք** էն արեւ **Գիւզէլին**» (Գե. էջ 87):

1 **Գ. Նժդեհ**, Հատընտիր, Ամարաս հրատ, Երեւան, 2006, էջ 151: Սոյն գրքի վերաբերեալ յղումները կտրուեն շարադրանքում (Հ. էջ):

2 **Գ. Նժդեհ**, Գրական երկեր, Նախիջեւան հրատ., 2003, էջ 86: Այսուհետեւ սոյն գրքի յետագայ յղումները՝ շարադրանքում (Գե. էջ):

Մակդիրների մեծագոյն մասն արտայայտուած է մէկական բառով, ինչը եւ ընդհանրապէս աւելի տարածուած է գրականութեան մէջ: Ահա այդպիսիներից հինգը. *ալեւոր իմաստութիւն, անարեւ ծերութիւն, դժոխատիպ բանտ, կարմիր վրէժ, հաւերժաշունչ ոգի*. «Ինչ որ Աստուածն է, այն էլ իր երկրպագուներն են»,- ասել է Արեւելքի **ալեւոր իմաստութիւնը** (Հ. էջ 498), «... կա՛յ մի բան, որ թունաւորում է ... սարսափեցնում՝ **անարեւ ծերութեան** ու մահուան ուրուականներով» (Հ. էջ 93), «... ժողովուրդների երեւակայութիւնն ահաբեկող **դժոխատիպ բանտերն** ու զնդանները, ...» (Հ. էջ 414-415), «Ես **կարմիր վրէժով** բռնուած կ'ուզեմ հարա՛յ տալ... - էյ գիտի նամարդ աշխարհ...» (ԳԵ. էջ 10), «Պատմական անձը քարեղէն արձան, քարացած էութիւն չէ, այլ՝ **յաւէրժաշունչ ոգի**» (Հ. էջ 359):

Խօսքիմասային առումով, սովորաբար, այսպէս է նաեւ ներկայ պարագային, մակդիրներն արտայայտում են ածականներով, ինչպիսիք էին վերը բերուած մէկական բառով արտայայտուածները: Այդպիսիք այլ առիթներով կլինեն նաեւ յետագայ շարադրանքում: Նժդեհի ստեղծագործութիւններում նոյնպէս կան գոյականով կամ դերբայներով արտայայտուած մակդիրներ: Գոյականական են՝ *աղամանդ գեղեցկութիւն, բարտի հասակ, բոց շրթեր, գայլ հարեւաններ, արծիւ ռազմիկ*. «Ո՞վ կը կոտրէ սիրոյ գրիչն **գեղեցկութեան աղամանդ**...»[3], «...**բարտի հասակ** աւիշի էր կարօտ...» (ԳՐԵ. էջ 121), «...**բոց շրթներէդ** փերթ առ փերթ, Թափէ ժպիտդ աչքերուս մէջ...» (ԳՐԵ. էջ 120), «...այսօր կը չարախնդան իր **գայլ հարեւաններէն** թուրքն ու թաթարը» (Հ. էջ 448), «...նա սիրուած էր, էն հպարտ **արծիւ ռազմիկը**...» (Հ. էջ 413): Դերբայներից, ինքնըստինքեան, գործածուած են հարակատարն ու ենթակայականը՝ *գերեզմանացած Թրքահայաստան, շպարուած թուլութիւն, խաչուած արդարութիւն*, ապա նաեւ՝ *ժպտացող յոյս, խայթող թերթ, հառաչող ազգեր*. «Թշնամին հսկում է ոչ միայն **գերեզմանացած Թրքահայաստանի**, այլեւ Խորհրդային Հայաստանի խաղաղութեան վրայ» (Հ. էջ 57), «...նուաստութիւն – ասել է **շպարուած թուլութիւն**...» (Հ. էջ 138), «Էականը դա դաւադրուած Նժդեհը չէ, **խաչուած արդարութիւնը**...»[4]: Եւ ապա. «Այո, երեխան ... խոստումնալից կարելիութիւն է, մի **ժպտացող յոյս**՝ լաւագոյն ապագայի» (Հ. էջ 252), «...**շուկայիկ յիշոցներ**, ... զրախօսութիւն, – ահա մեր «**խայթող**» **թերթերի** հրապարակախօսութիւնը» (Հ. էջ 33), «**Հառաչող ազգերը**՝ ստրուկ, ... միշտ էլ դիմել են յեղափոխութեան» (Հ. էջ 84):

Քննուող մակդիրների մեծագոյն մասը փոխաբերական բնոյթի է, իսկ անհամեմատ փոքր մասը՝ ուղղակի իմաստ ունեցող: Վերջիններից են՝ *գինեւոնային հայրենասիրութիւն, հայրենակրօն մայրեր, ոգեւից երիտա-*

3 **Գ. Նժդեհ**, Գրական երկեր, Երեւան, 2012, էջ 119: Սոյն գրքի վերաբերեալ յղումները՝ շարադրանքում (ԳՐԵ. էջ):

4 «Ազգ», 12.02.2011 (Գ. Նժդեհի մի նամակից): Սոյն թերթի յղումները կտրուեն շարադրանքում Ազգ:

սարդութիւն, քաղաքականապէս մուրացիկ ժողովուրդ, զոհայօժար հայրենասիրութիւն, որոնք բանաստեղծական են իւրովի. «**Գինետնային հայրենասիրութիւնը** ... այնքան էլ հեռու չէ անհայրենասիրութիւնից» (Հ. էջ 117), «Ինչպիսի՜ աստուածային հաճոյք մարտնչողի համար՝ լսել խրախուսիչ ձայնը **հայրենակրօն մօր**: Մայր անունը պիտ դառնայ ... սրբազան մենաշնորհը **հայրենակրօն մայրերի**» (Հ. էջ 123-124), «Դէպ մեզ է գալիս մեր **ոգելից երիտասարդութիւնը**» (Հ. էջ 169), «Տկար, **քաղաքականապէս մուրացիկ ... ժողովուրդը**» (Հ. էջ 133), «Հայաստանը պէտք ունի հանապազօրեայ եւ **զոհայօժար հայրենասիրութիւն**» (Հ. էջ 602):

Փոխաբերական իմաստ ունեցող մակդիրները դիտարկելիս հարկ է ուշադրութիւն դարձնել յետեւեալ ոճական հնարների վրայ, որոնցով արտայայտուածները առաւել շատ են:

Շնչաւորում եւ անձնաւորում: Բնութեան երեւոյթներին, առարկաներին վերագրւում են կենդանիների կամ մարդու յատկութիւններ: Մարդկանց ծայր աղքատութեան մէջ պահող կարիքը բնորոշւում է՝ իբրեւ **բռնակալ**, գլգլացող առուակը՝ **լալկան,** (համապատասխանեցնելով նկարագրուող իրավիճակին), մեղմ զեփիւռը՝ **հեզ,** վերջալոյսը՝ **տխուր,** գիշերային կիսախաւարով պատուած դաշտերը՝ **քնաթաթախ**. «... հազար հազարներին սեւ ցաւն է ընկերանում, **բռնակալ կարիքը նեղում** ...» (Հ. էջ 412), «Նա սիրում էր մորմոքը **լալկան առուակի** ...» (Հ. էջ 413), «Իմ սէ՛րը – դա շունչն է **հեզ զեփիւռի**» (Գե. էջ 45), «Ահ, նա (Հրանտը) սիրում էր եւ **վերջալոյսը տխուր** ... » (Հ. էջ 413), «... եկայ պատմելու, թէ ինչպէս էն **քնաթաթախ դաշտերում՝** մխացի ես...» (Գե. էջ 34):

Քանակով շատ աւելին են այն մակդիրների ու մակդիրակիրների կապակցութիւնները, որոնցում բնութեան երեւոյթների կամ առարկաների յատկութիւնները վերագրւում են մարդուն: Այս կերպ բուռն ու ջերմ սէրը հեղինակը բնորոշում է՝ իբրեւ *արեւուտ*, բուռն զգացմունքներ արտայայտող շրթունքները՝ *բոցավառ,* ջարդարար հարեւան ժողովուրդներին՝ *գիշատիչ*, գոհունակութիւն արտայայտող ժպիտը՝ *լուսափայլ,* բուռն ու ջերմագին կարօտը՝ *հրեղէն,* յաղթական խիզախ առաջնորդին՝ *շանթանման.* «Ճապոնացու **արեւոտ սիրով** սիրի՛ր հայրենիքդ...» (Հ. էջ 418), «Այս խօսքերը շշնջացին Առծիւ Լաթոյի **բոցաւառ շրթունքները**...» (Հ. էջ 416), «...դա ասել է՝ հեշտացնել մեր **գիշատիչ հարեւանների** գործը...» (Հ. էջ 34), «...բաւականութեան **լուսափայլ ժպիտը** երեսիդ...» (Հ. էջ 412), ... օրուայ հայութեան միջոցով ... **հրեղէն կարօտով** եւ կամքով իր հին փառքերը կը փնտռէ» (Հ. էջ 174), «Այո, ... նման գրքերին է յաջողւում ժողովրդէն **շանթանման առաջնորդներ** ու մահապատրաստ վիտիազներ քամել» (Հ. էջ 595):

Մի երրորդ ոճական հնարով բնութեան մի երեւոյթի, առարկայի յատկութիւնը վերագրւում է դարձեալ բնութեան մէկ ուրիշ երեւոյթի, առարկայի. եթէ համեմատութիւններով արտայայտենք, *զեփիւռը* հաճելի է ու մարմնին

դուրեկան, ինչպէս *թաւիշը, այբուբենը*՝ սրբազան ու գեղեցիկ՝ ասես *լուսեղէն, աստղերը՝ ոսկու պէս շողացող.* «... **լուսեղէն այբուբեն** ... մեզ տուել է Տարօնը» (Հ. էջ 525), «Ահ, նա սիրում էր եւ երգն անխօս **ոսկեշող աստղերի**...» (Հ. էջ 413):

Մակդիրների կիրառութիւնը: Գարեգին Նժդեհի երկերում տեղ գտած մակդիրների ցանկը քննելիս աչքի է զարնում յետեւեալ հանգամանքը: Նա առանձնակի հակում ունի դէպի որոշակի բառեր ու արմատներ եւ դրանցով է կազմում իր մակդիրների մեծ մասը: Այդ բառերն ու արմատները բնորոշում են նրա իսկ էութիւնը, ներդաշնակվում նրա իսկ իղձերին ու նպատակներին, արտայայտում նրա սիրելի կամ գարշողական վերաբերմունքը դէպի ինչ-ինչ առարկաներ, երեւոյթներ, մարդիկ՝ ներշնչելով նրան ստեղծելու իր խօսուն մակդիրները: Ահա այս կերպ առանձնանում են՝ *Աստուած, արեւ, բոց, հայ, լոյս, հուր, շանթ, ոսկի* բառերը եւ դրանցով կազմուած բարդութիւնները: Դրական բնորոշումների պարագային. *աստուածաշունչ, աստուածազարդ արեւաղէմ, արեւուտ, բոցավառ, բոցեղէն, բոցաշունչ, լուսաղաւան, լուսափայլ, լուսեղեն, հրաշունչ, հրեղէն, հրաբերան, շանթանման, շանթընկեց, շանթող, ոսկեղէն:* Բացասական բնորոշումների դէպքում՝ *հայասպան, հայակեր, հրատանջ, մահաշունչ, գայլ, գիշատիչ, թղթէ, շնացեղ:* Շատ այլ մակդիրների շարքում ահա սրա՛նց վրայ է սեւեռում ընթերցողի ուշադրութիւնը: Ճիշտ նոյն կերպ աչքի են զարնում մեծ թուով որոշակի մակդիրակիրներ, որոնք հանդիպում են նկատելիօրէն յաճախ՝ կապուած հեղինակի որդեգրած գաղափարների, ապա նաեւ այն հասարակական երեւոյթների, խնդիրների, մարդկային ներաշխարհի, հասարակական միջավայրի հետ, որոնց լուսաբանում կամ նկարագրում է նա: Առանձին-առանձին կանգ առնենք Նժդեհի նախասիրած այն թեմաների վրայ, որոնց նուիրուած երկերում գոհարների պէս սփռուած են առաւել յաճախ գործածուած մակդիրների ու մակդիրակիրների կապակցութիւնները՝ առիթը ներկայանալիս անդրադառնալով նիւթի հետ ներդաշնակող այլեւայլ մակդիրների նոյնպէս:

ա. Հայրէնասիրութիւն: Այս կէտում ընթերցողը Նժդեհի հետ միատեղ ապրում է բանաստեղծական շնչով արտայայտուած նրա նուիրական զգացմունքները դէպի հայրէնի երկիրը, ազգը, ամենաընդհանուր ընդգրկմամբ՝ ցեղը եւ նրա մշակոյթը. «առիւծաբնակ երկրամաս» (Հ. էջ 659), «արեւաղէմ ժողովուրդ» (Հ. էջ 594), «երկաթէ ժողովուրդ» (Հ. էջ 450), «լուսեղէն այբուբեն» (Հ. էջ 525), «հոգով արծիւ հայ» (Հ. էջ 243), «հոգով արծիւ ժողովուրդ» (Հ. էջ 442), իսկ դէպի այդ երկիրը բնակեցրած ու բնակեցնող հայրերը, մայրերը, որդիները՝ «առիւծածին մայրեր» (Հ. էջ 125), «աստուածաշունչ նահատակ» (Հ. էջ 78), «աստուածաշունչ որդի» (Հ. էջ 546), «լուսաղաւան նախահայրեր» (Հ. էջ 354), «հայրենակրօն մայրեր» (Հ. էջ 123), «հրաշունչ Մամիկոնեան» (Հ.

էջ 382), «հրաշունչ Վարդաններ» (Հ. էջ 550): Ընթերցողը նոյնպիսի վիշտ է ապրում հեղինակի հետ՝ իր տառապաշատ ժողովուրդի համար ու դառնում ատելավառ դէպի այդ վիշտը պատճառողները. «գայլ հարեւան» (Հ. էջ 448), «գայլ ցեղ» (Հ. էջ 78), «գերեզմանացած Թրքահայաստան» (Հ. էջ 57), «գիշատիչ հարեւաններ» (Հ. էջ 34), «հառաչող ազգ» (Հ. էջ 84), «հրատանջ Ազգ»[5*] (Հ. էջ 435), «որբացած երկիր» (Հ. էջ 416): Սակայն Նժդեհը ոգեպնդում է իր ժողովրդին, ոտքի հանում՝ դէպի յառնում. «բոցեղէն հայրէնաբաղձութիւն» (Հ. էջ 468), «դիւցազնաշունչ ցեղականչ» (Հ. էջ 533), «հրաշունչ ցեղայնութիւն» (Հ. էջ 488), «ոգելից երիտասարդութիւն» (Հ. էջ 169), «շանթանման հերոսներ» (Հ. էջ 146), «վրիժավառ հայորդի» (Հ. էջ 417):

բ. Կռիւ ու պայքար: Բոլորի պարտականութիւնն է հայրենիքի պաշտպան դառնալ՝ ճակատելով թշնամիների դէմ, ըստ որում՝ միշտ պատրաստ լինելով նահատակուելու նրա համար, հոգեպէս գերազանցութիւն ունենալ նուաճողների նկատմամբ, դրանով իսկ յաղթական լինել ռազմադաշտերում: Արծարծելով այս գաղափարը՝ Նժդեհը դիմում է ռազմաշունչ մակդիրների՝ հայրէնի պաշտպաններին վերագրելով գերհզօր ոյժ ու խիզախութիւն: Ովքեր են նրանք ու ինչպիսին են նրանք: Ահա՛. «աստուածաշունչ դիւցազն» (ԳԵ. էջ 67), «աստուածաշունչ Հսկայ» (Հ. էջ 410), «աստուածաշունչ նահատակ» (Հ. էջ 78), «արծիւ ռազմիկ» (Հ. էջ 413), «հրաշունչ զինուոր» (Հ. էջ 568), «հրաշունչ Մամիկոնեան» (Հ. էջ 382), «հրաշունչ Ռազմիկ»,[6] «շանթանման հերոսներ» (Հ. էջ 146), «շանթընկեց բազուկ» (Հ. էջ 489), «շանթող զօրավար» (Հ. էջ 383), «փոթորկաշունչ այրուձի» (Հ. էջ 380):

գ. Խօսք: Գ. Նժդեհը բազմաթիւ առիթներով արծարծել է խօսքի վճռական նշանակութիւնը եւ նրա ներգործութիւնը զանգուածների վրայ՝ համարելով զենքից աւելի ուժեղ միջոց՝ բոցավառելու հայրէնասիրութիւն, ապա եւ ռազմադաշտերում յաղթական դուրս գալու համոզուածութիւն: Ներակայացուող մակդիրաւոր բառակապակցութիւնները բնութագրում են խօսքը իր թէ՛ բացասական, թէ՛ դրական դրսեւորումներով. «աղտեղաբան թռուցիկ» (Հ. էջ 211), «թոյթէ կարգադրութիւն»[7], «խայթող թերթ» (Հ. էջ 33), «հայհոյանքներով խնկուած յօդուած» (Հ. էջ 104), «մահաշունչ կեղծիք» (Հ. էջ 86), «մեռեալ շեշտ» (Հ. էջ 460), «ուռուցիկ խօսքեր» (Հ. էջ 30)... Բայց նաեւ. «աստուածաշունչ խօսք» (Հ. էջ 413), «աստուածաշունչ մունետիկ» (Հ. էջ 593), «մարգարէաշունչ Քրիստափորներ» (Հ. էջ 171-172), «երկաթ խօսք» (ԳԵ. էջ 20), «խաչուած խօսք» (ԳԵ. էջ 23), «հրեղէն խօսք» (Հ. էջ 470), «հրաբերան պերճախօս» (Հ. էջ 107), «հրեղէն պատգամ» (Հ. էջ 413), «ոսկէ խօսքեր» (Հ. էջ 96), «տաք խօսք»[8], «ցեղաշունչ խօսք» (Հ. էջ 148):

5* Հասարակ գոյականների մեծատառով գրութիւնը Գ. Նժդեհինն է:

6 **Գ. Նժդեհ,** Նորահայտ նամակներ, Հայաստանի արխիվային գործի հրատ., Երեւան, 2012, էջ 24:

7 Դատական գործ թթ. 321-339:

8 ՀՀ ՊԱ, Ֆ. 198, Ց. 1, Գ. 73, թթ. 19-20:

դ. Մարդ: Ինչպիսի՞ն է մարդը՝ իր ֆիզիկական, հոգեկան, բարոյական առումներով: Նա է կրողը հայրէնասիրութեան կամ հակահայրէնասիրութեան (հեղինակի բնորոշմամբ՝ *գիտեմնային հայրէնասիրութեան), կարճաշունչ հայրէնասիրութեան:* Նա է վախկոտօրէն տեղի տալիս կամ գրեթէ առանց զէնքի՝ սրբազան զգացումներով օժտուած, յաղթում թշնամուն: Նրանն է թէ՛ տգեղատգեղ, անբովանդակ, թէ՛ ոգեշունչ իմաստախոր խօսքը: Այս ամէնին Գ. Նժդեհը յաճախ է անդրադարձել՝ վերլուծելով կերպարներ եւ մարդկային ներաշխարհը: Ներքոյիշեալ մակդիրային կապակցութիւնները վերաբերում են մարդու ֆիզիկականին, յաջորդ՝ ե. կէտի շարքը՝հոգեկանին. «ադամանդ գեղեցկութիւն» (ԳՐԵ. էջ 119), «ադամանդ ճակատ» (Հ. էջ 180), «բարտի հասակ» (ԳՐԵ. էջ 121), «Արարատեան արեւով օծուն ճակատ» (Հ. էջ 151), «բոց շրթներ» (ԳՐԵ. էջ 120), «լուսափայլ ժպիտ» (Հ. էջ 412), «կայծկլտուն նայուածք» (ԳՐԵ. էջ 127), «կարօտավառ հայեացք» (Հ. էջ 326), «վիուկատիպ կանայք» (Հ. էջ 210):

ե. Հոգեկան աշխարհ: Բնութագրում է մարդու ներաշխարհը, նրա բացասական ու դրական յատկութիւնները. «անյատակ տգիտութիւն» (Հ. էջ 115), «գաղջ վերաբերմունք» (Հ. էջ 581), «ժանգոտ մտածում» (Հ. էջ 102), «բնաեղծուած սրիկայ» (Հ. 194), «հիւանդոտ փառասիրութիւն» (Հ. էջ 23), «խորշակահար հոգի» (Հ. էջ 135), «հողմավար հոգի» (ԳՐԵ., էջ 102), «հոգեպէս քանդուած էակ» (էջ 197), «շպարուած թուլութիւն» (Հ. էջ 138), «ցեխոտ (Նժդեհի դէմ) արշաւանք»[9] ... Բայց նաեւ. «ալեւոր իմաստութիւն» (Հ. էջ 498), «աստուածային արհամարհանք» (Հ. էջ 333), «արեւոտ սէր» (Հ. էջ 418), «բիւրեղ նկարագիր» (Հ. էջ 597), «բոցավառ զգացում»[10], «գրանիտէ հաւատ» (Հ. էջ 90), «կարմիր վրէժ», (ԳԵ. էջ 10) «հաւերժաշունչ ոգի» (Հ. էջ 35), «հրեղէն կարօտ» (Հ. էջ 174), «նուշ յուշ» (ԳՐԵ. էջ 97), «ոսկի երազ» (Հ. էջ 24), «վարդագոյն լաւատեսութիւն» (Հ. էջ 22), «տաք կարեկցութիւն» (Հ. էջ 410)...

զ. Բնութիւն: Եւ, վերջապէս՝ աշխարհը, միջավայրը, որի մէջ ապրել են եւ ապրում են մարդկային սերունդները: Ըստ նկարագրուող իրավիճակի, բնութիւնը դառնում է վշտայար ու վշտացնող. «անապատ կուրծք» (բնութեան) (ԳԵ. էջ 22), «լալկան առուակ» (Հ. էջ 413), «վայող քամի» (Հ. էջ 413), «տխուր վերջալոյս» (Հ. էջ 413)... Բայց, ընդհանրապէս, մանաւանդ հայրենի բնութիւնը, գեղեցիկ է ու քնարաշունչ. «աստուածազարդ բնութիւն» (Հ. էջ 150), «արեւի հետ համբուրուող լեռ» (Հ. էջ 359), «արծուանիստ գահ» (Հ. էջ 413), «թաւշեայ զեփիւռ» (ԳԵ. էջ 45), «լալկան զեփիւռ» (ԳԵ. էջ 45), «կապուտաչուի շուշան» (Հ. էջ 376), «հեզ զեփիւռ» (ԳԵ. էջ 45), «ոսկեշող ցոլքեր» (Հ.

9 ՀՅԴ ԿԱ , դատական գործ, թթ. 88-90:

10 **Գ. Նժդեհ**, Լեռնահայաստանի գոյամարտը, «Հայրենիք» ամսագիր, թիվ 11, 1923 թ.: Սոյն ամսագրի վերաբերեալ յետոյ յղումները կտրուեն շարադրանքում ԼԳ. տեսքով:

էջ 415), «քնաթաթախ դաշտ» (ԳԵ. էջ 34), «քնաթաթախ ծաղիկներ» (ԳԵ. էջ 62), «անխօս ոսկեշող աստղեր» (Հ. էջ 413)...

Մակդիրային ծաղկաքաղ: Գարեգին Նժդեհի ստեղծագործութիւններից բառաքաղել ենք աւելի քան 150 բանաստեղծական մակդիր: Դրանցից 40-ը՝ չափածոյ եւ արձակ բանաստեղծութիւններից, ըստ որում, գրեթէ կէսը «Դաշնակցութեան պանթէոնը» շարքից: Մնացած աւելի քան 110-ը քաղուած են գիտական ու հրապարակախօսական աշխատութիւններից, նամակներից, կոչերից: Շատ մակդիրակիրներ միանգամից կարող են ունենալ երկու, նոյնիսկ երեք մակդիր: *Ջեփիւռ* եւ *նայուածք* գոյականներն ունեն երեքական մակդիր. առաջինը՝ *լալկան, հեզ, թաւշեայ,* երկրորդը՝ *խածնող, հոգի հատցնող, կայծկլտուն:* Լինում են քնարական խտացումներով նախադասութիւններ, ինչպիսին է յետեւեալ մէջբերումը, ուր առկայ են երեք մակդիր եւ փոխաբերութիւններ. «Նա սիրում էր մորմոքը **լալկան առուակի ու հառաչը հեծկլտող ու վայող քամիների**...» (Հ. էջ 413):

Մենք կատարել ենք 40-ի չափ մակդիրների մի ծաղկաքաղ, որն այբբենական կարգով ներկայացնում ենք ստորեւ: Դրանցից իւրաքանչիւրը մի-մի գեղագիտական գիւտ է, իսկ նրանց ամբողջութիւնը ասես երաժշտական, քնարական մի ստեղծագործութիւն, եւ վկայում են հեղինակի արտասովոր բանաստեղծական մտածողութեան մասին:

* * *

Ադամանդ գեղեցկութիւն. «Ո՞վ կը կոտրէ սիրոյ գրիչն գեղեցկութեան ադամանդ» (ԳՐԵ. էջ 119):

Ադամանդ ճակատ. «Առաքեալի սիրտ, իմաստասէրի գլուխ, ադամանդ ճակատ – ահա՛ կատարեալ առաջնորդը» (Հ. էջ 180):

Ալեւոր իմաստութիւն. ««Ինչ որ Աստուածն է, այն էլ իր երկրպագողներն են», – ասել է Արեւելքի ալեւոր իմաստութիւնը»: (Հ. էջ 498):

Աղտեղաբան թռուցիկ. «...Ազգայնական հայութիւնը յղացավ վատութեան մի միւզէի գաղափարը, ուր պիտի հաւաքէր ... աղտեղաբան թռուցիկներ, անստորագիր նամակներ ...» (Հ. էջ 211):

Անապատ կուրծք. «Մեռնող բնութեան անապատ կրծքին Անվերջ, յուսահատ աշունն է լալիս» (ԳԵ. էջ 22):

Անյատակ տգիտութիւն. «...ես ծիծաղում եմ նրա (թրքութեան) անյատակ տգիտութեան վրայ... Պիտի կարողանա՞ն սպանել հայ ժողովրդի պատմական յիշողութիւնը» (Հ. էջ 115):

Աստուածազարդ բնութիւն. «Իր (Ահարոնեանի) խօսքը Հայաստանի աստուածազարդ բնութեան թախծութիւնն ունի» (Հ. էջ 150):

Աստուածաշունչ խօսք. «Այսպէս է պատգամում իմ մարգարէն իր աստուածաշունչ խօսքը» (ԳՐԵ. էջ 76):

Աստուածաշունչ նահատակ. «...հայհոյեցին յաճախ յեղափոխութեանը եւ խզբզեցին նրա աստուածաշունչ նահատակներին» (Հ. էջ 78):

Աստուածաշունչ քնար. «Նա (Եավորովը) մեզ իր աստուածաշունչ քնարը տրամադրեց, քանզի երգիչ էր» (Հ. էջ 591):

Արեւի հետ համբուրուող լեռ. «Հոգու համար ... արեւի հետ ամեն օր առաջինը համբուրուող լեռը՝ հողեղէն կարկառ, բարձունք չէ՞ միայն... » (Հ. էջ 359):

Բոցավառ զգացում. «Կռիւը նրա (այունեցու) համար ... մի արնոտ դրամա, որի մէջ առաջին դերերը կատարում են բոցավառ զգացումը եւ յաղթական մահը» (ԼԳ.): Բոցեղէն հայրենաբաղձութիւն. «Բոցեղէն հայրենաբաղձութիւնը ... հայրենազուրկ Հրէան հրէայ պահեց...» (Հ. էջ 468):

Գաղջ վերաբերմունք. «Հայ հասարակագիտակ մտքի աղքատութեամբ պիտի բացատրել հին սերունդի գաղջ վերաբերմունքը՝ դէպի նորը» (Հ. էջ 581):

Գայլ ցեղ. «...Այլապէս քոյ ժողովուրդը իր տեղն արեւի տակ աստիճանաբար պիտի զիջի իրեն շրջապատող ... գայլ ցեղերին ...» (Հ. էջ 78):

Գեղատխուր հողաթումբ. «Նա, անցո՛ղդ, այս գեղատխուր հողաթմբի տակ հող դարձած պատանին...» (Հ. էջ 413):

Գիշատիչ կառավարութիւն. «Խրիմյանը...Հայ Եկեղեցու նյութական հարստութիւնը փրկելու համար ռուս գիշատիչ կառաւարութեա՛ն դէմ մաքառեց» (Հ. էջ 213):

Գորտի հոգով. «Գորտի հոգով առօրեապաշտ պաղ մահկանացուն ...» (Հ. էջ 576):

Գրանիտէ համոզում . «Դա Գանդին է, ... որը գրանիտէ համոզում ունի» (Հ. էջ 180):

Գուժկան բու. «Լուռ մտիկ տուէք մոխրակոյտերուն՝ կարմիրով ներկուած: Լսեցէ՛ք ողբերգն բուերու գուժկան ...» (ԳՐԵ. էջ 115):

Դիւցազնաշունչ ցեղականչ. «Հայ ստամտաւորականը ... Իգուր անցան Ալիշանի ու Ռաֆֆիի, Ահարոնեանի ու Վարուժանի եւ այլոց դիւցազնաշունչ ցեղականչները ...» (Հ. էջ 533):

Զրահապատ թաթ. «Մուդրոսի հաշտութեան պայմանագրի ոյժով յաղթականները ազատ էին իրենց զրահապատ թաթը դնել թուրքական երկրի ամէն մի կէտի վրայ» (Հ. էջ 267):

Թեւատ ունայնութիւն. «Անցեղաշունչ է, որով ... թեւատ ու առօրէական ունայնութիւններից ... բարձրանալու անզօր» (Հ. էջ 532):

Թղթէ բարեմակութիւն. «... հենց որ մի ուրիշի թղթէ բարեկամութիւնը իրենց աւելի շահավէտ թւաց, նրանք ... լքում են իրենց նախկին զինակիցներին» (Հ. էջ 56):

Թղթէ կարգադրութիւն. «Զբաղուած էին ... հանգամանքներին անհա-

ոիր նախագծեր մշակելու վրայ՝ ես բոլոր այդ ձեւի թղթէ կարգադրութիւններն անուշադրութեան էի մատնում...»[11]:

Լալկան զեփիւռ. «Իմ սէ՛րը՝ դա շունչն է հեզ ու թաւշէայ, լալկան զեփիւռի» (ԳԵ. էջ 45):

Լուսեղէն այբուբեն. «... Լուսեղէն այբուբեն – մեզ տուել է Տարօնը» (Հ. էջ 525):

Խածնող նայուածք. «Ու նայուածքներդ, ախ այդ խածնող, հոգի հատցնող կայծկլտուն նայուածքներդ...» (ԳՐԵ. էջ 127):

Խորշակահար հոգի. «Խօսէք հետները...եւ պիտի հասկանաք սրանց խորշակահար հոգին, որ մատնում են իրենց ամեն մի խօսքի ու շարժուձեւի մէջ» (Հ. էջ 135):

Ծիածանային անուրջներ. «Փշրեցի՛ն Տէր, վատ արարածները մէկիկ-մէկիկ ծիածանային անուրջներս...» (ԳԵ. էջ 44):

Կապուտաչուի շուշան. «Կ՚անցնեն օրեր... եւ նա կապուտաչուի շուշանները կը վերածի աղբի» (Հ. էջ 376):

Կիսագոյն կազմակերպութիւն. «... կազմում են թխովի հեռագրեր ... կիսագոյն կամ բոլորովին անգոյն կազմակերպութիւնների անունից եւ ուղարկում Մոսկուա...» (Հ. էջ 206):

Հայաստանասպան քաղաքականութիւն. «Իբր ցեղօրէն ընկած տիպ՝ նա ուզում է Քրիստոսն անգամ դարձնել բոլշեւիկեան գործակալ եւ լծել կոմունիստների հայաստանասպան քաղաքականութեան» (Հ. էջ 216):

Հեծկլտող ու վայող քամի. «Նա սիրում էր ... հառաչը հեծկլտող ու վայող քամիների ...» (Հ. էջ 413):

Հոգեպէս քանդուած էակ. «Նա իբր հոգեպէս քանդուած էակ՝ նաեւ պատրապաշտ է» (Հ. էջ 197):

Հրաբերան պերճախօս. «Դու դառնում ես հրաբերան պերճախօսը» (Հ., էջ 107):

Հրատանջ ազգ. «...բանտարկեալները...ուզեցին Ազատութիւն եւ Արդարութիւն գողանալ իրենց հրատանջ Ազգի համար...» (Հ. էջ 435):

Ճշմարտութեամբ օծուն գրիչներ. «...տեսնել ու հասկանալ կը սկսին ... շարժուիլ կը սկսին ճշմարտութեամբ օծուն գրիչներ» (Հ. էջ 88):

Մահաշունչ կեղծիք. «Մահաշունչ կեղծիքէն խորշակահար լինում ... խեղդում ես շրջապատիդ մահաշունչ կեղծիքի մէջ» (Հ. էջ 86):

Յորանջող տգիտութիւն. «...այդ տողերի իմաստը պէտք է բացատրել ռամկավարների յորանջող տգիտութեամբ, այլ հոգեբանութեամբ» (Հ. էջ 190):

Ոսկեգրիչ մտաւորական. «Ոսկեքսակ հայը չկանգնեց ոսկեգրիչ մտաւորականի թիկունքում» (Հ. էջ 468):

---

11 ՀՅԴ Գերագոյն ատեան, Դատական գործ, թթ. 321-339:

Պերճուհի շամանդաղ. «Շղթաներդ ոսկեցնցուղ, ո՛վ պերճուհի շամանդաղ ...» (ԳՐԵ. էջ 119):

Տաք խօսք. «...պէտք է ժողովրդին կենդանի գործ ցոյց տալ, տաք խօսքի հետեւանքն ապացուցել»[12]:

Ցեխոտ արշաւանք. «Այսօր շատերը ... պարսկական չարչի խանաներից տմարդաբար ցեխոտ արշաւանք են սկսել իմ եւ Լեռնահայաստանի հերոս ժողովրդի հասցէին»[13]:

Ուռուցիկ խօսքեր. «...յաճախ փորձում է իր հոգու այլանդակութիւնները քողարկել այս կամ այն ուռուցիկ եւ գեղեցիկ խօսքերով» (Հ. էջ 30):

Փայտէ ժողովուրդ. «...սրանց համար... հայութիւնը փայտէ ժողովուրդ է, անընդունակ նոյնիսկ զգալու եւ երազելու լաւ օրերի մասին» (Հ. էջ 82):

Քնաթաթախ ծաղիկներ. «Գիշեր էր: Մարմանդ հովերը քնքշօրէն սիրաբանում էին քնաթաթախ ծաղիկների հետ» (ԳԵ. էջ 62):

12 ՀՀ ՊԱ. Ֆ. 198, Ց. 1, Գ. 73, թթ. 19-20:
13 ՀՅԴ ԿԱ, Դատական գործ, թթ. 88-90: